ՀՏԴ 373

Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների դաստիարակչական աշխատանքների օրինակելի պլանի ներդրման անհրաժեշտության մասին

Գագիկ Էմինյան
Մարինե Փահլևանյան

Հանգուցային բառեր. *կրթություն, դաստիարակություն, ուսումնադաստիարակչական աշխատանք, դպրոց, ուսուցիչ, սովորող, էքսկուրսիա, մեթոդ, մասնագիտություն, չափորոշիչ, հայրենիք*

Հայկական առաջին Հանրապետության կազմավորումից ի վեր պարտադիր հանրակրթությունը դիտարկվել է որպես պետության կարևորագույն առաջնորդություններից մեկը: Սովորողների ուսուցման և դաստիարակության կազմակերպման գործընթացում լուրջ առաջընթաց գրանցվեց հատկապես խորհրդային շրջանում: Մասնավորապես Հայաստանի խորհրդայնացումից հետո գործող հայկական դպրոցներում ներմուծվեցին առավելապես ռուսական ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների ոճն ու ծրագրերը: Իրավամբ պետք է նշել, որ ԽՍՀՄ-ի տարիների ընթացքում կրթության կազմակերպման մեջ լուրջ առաջընթացներ եղան: Առանձին դեպքերում էլ դեռ մինչ օրս «սովետական դպրոցը» իր ազդեցությունն է թողել ուսուցման և դաստիարակչական առանձնահատկությունների և բովանդակության վրա: Խորհրդային Միությունում սովորողների ուսուցման և դաստիարակության կազմակերպման համանման ամբողջականությունը դպրոցն էլ ավելի ուժեղ դարձրեց:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հետխորհրդային բոլոր երկրներում կատարվող փոփոխությունները անդրադարձան նաև հանրակրթական դպրոցի վրա: Արևմտյան արժեքների ներթափանցման, ուսումնադաստիարակչական աշխատանքների բազմազանության և դրանից բխող խնդիրները նպաստեցին ուսման որակի վատթարացմանը: Շատ դեպքերում խնդրահարույց այս հարցը ունեցավ և շարունակում է ունենալ բացասական ազդեցություն ուսման որակի վրա:

Օրինակ՝ 2018-2019 ուստարվա գիտելիքների գնահատման արդյունքներն ավելի բարձր են 2019-2020 ուստարվա արդյունքների համեմատ, սակայն ընդհանուր առմամբ նման գնահատականները զոհացուցիչ լինել չեն կարող: «Հանրակրթության ոլորտում իրականացվող

ստուգումների ընթացքում 6-րդ, 9-րդ, 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» առարկայից: Գրավոր աշխատանքներին մասնակցած 564 սովորողներից գերազանց են գնահատվել 27-ը (5 %), լավ՝ 82-ը (15 %), բավարար՝ 205-ը (36 %), անբավարար՝ 250-ը (44 %): Միջին գնահատականը կազմել է 4,2 միավոր: 11-րդ դասարանում գրավոր աշխատանքին մասնակցած 50 սովորողներից 31-ը (62 %) ստացել են անբավարար, իսկ գերազանց է գնահատվել 1 սովորող: Միջին գնահատականը 11-րդ դասարանում կազմել է 3,4 միավոր, 6-րդ դասարանում՝ 4,4, իսկ 9-րդ դասարանում՝ 4,2 միավոր: Գրավորի միջոցով ստուգվել են 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիների սովորողների գիտելիքները: Համեմատելով նշված ուստարիների գրավոր աշխատանքների արդյունքները՝ եղել է հետևյալ պատկերը [6].

Աղյուսակ 1

Տարբեր տարիների գրավոր աշխատանքների արդյունքների համեմատություն

Գնահատական	2018-2019 թթ.	2019-2020 թթ.
9-10	14 %	5 %
7-8	23 %	15 %
4-6	53 %	36 %
1-3	10 %	44 %

Պարզ է դառնում, որ նման ցուցանիշներով պետական պատվերի ապահովումն ուղղակի հեռու է ցանկալիից:

Գաղտնիք չէ նաև այն հանգամանքը, որ սա հետևանք էր այն ամենի, որ առարկայական չափորոշիչներում գիտելիքների չափելիության պահանջները բավականաչափ խրթին են ձևակերպված, և միասնական չափորոշչային պահանջներից զատ խորքային վերլուծություններ չեն արվել: Այո՛, չենք կարող ժխտել, որ չափորոշչային պահանջի բավարարման դեպքում կունենանք եթե ոչ իդեալական, ապա շատ ավելի որակյալ և կրթված քաղաքացիներ: Բայց, ավա՜ղ, այդպես չէ, և խնդիրը շարունակում է մնալ չլուծված: Այս ամենն անշուշտ իր ազդեցությունն է թողնում սովորողների վարքագծային դրսևորումների վրա: Մեր կողմից իրականացված դիտարկումներից պարզ է դառնում, որ եթե դիտարկենք, օրինակ, անչափահասների կողմից և նրանց մասնակցությամբ կատարվող հանցագործությունների 2018-2019 թթ. ուսումնասիրության արդյունքները և կրթության պետական տեսչական մարմնի վերլուծությունները, պարզ կդառնա, թե ինչ ծանր, եթե ոչ աղետալի վիճակում է հանրակրթությունը:

«ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ նախորդող տարվա համեմատ 2019 թ. անչափահասների հանցավորության ցուցանիշը որոշակիորեն աճել է: Եթե 2018 թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 359 դեպք, ապա 2019 թ. արձանագրվել է նման 400 դեպք, այսինքն աճը եղել է 41 դեպքով կամ 11.4%-ով: Հանցագործությունների մեջ ներքաշվելու հիմնական թիրախային խումբը 15-17 տարեկաններն են: Ինչպես նշում են մասնագետները՝ անչափահասների կողմից հանցագործություն կատարելու հիմնական դրդապատճառն անբավարար զբաղվածությունն է և ծնողների անուշադրությունը» [5]:

Այս ամենը վկայում է, որ ուսումնական գործընթացում արձանագրված ոչ ցանկալի արդյունքը իր բացասական ազդեցությունն է թողնում սովորողների դաստիարակության վրա:

Եթե ուսումնական գործընթացում առկա է չափելիության որոշակի գործիքակազմ, ապա դաստիարակության մասով՝ գրեթե ոչինչ: Դաստիարակչական գործընթացի մեջ դասագրքերը, չափորոշիչներն ու ծրագրերը լիարժեք գործիքակազմ չեն: Հանրակրթական բնագավառում չընդհատվող փոփոխությունները վերոբերյալ գործընթացն էլ ավելի են բարդացնում: Հանրակրթական ուսումնական հաստատություններում բացակայում են միասնական (միատեսակ) վարժանքներ, հայրենաճանաչողական միանման (նույնաբովանդակ) միջոցառումներ, որոնք դաստիարակչական լուրջ խթան կարող են հանդիսանալ: Սա լավագույն միջոցն է սովորողներին կարգապահական կանոններին ընտելացնելու համար: Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման և իրականացման աշխատանքները պետք է ներառեն նաև հետևյալը.

1. սովորողների մասնագիտական կողմնորոշում,
2. դաստիարակչական նորմերի ամրապնդում և փոխանցում հաջորդ սերունդներին,
3. ժամանակի հրամայականին համահունչ քաղաքացու դաստիարակում,
4. բազմակողմանի հատկանիշներով ակտիվ քաղաքացու դաստիարակում,
5. իր հայրենիքի և բնակավայրի հանդեպ հայրենասեր քաղաքացու դաստիարակում,
6. սովորելը կարևորող և սովորելու նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող քաղաքացու դաստիարակում:

Եթե, օրինակ, տարրական դպրոցից անցումը հիմնական դպրոց իրականացվում է շատ սահուն (քանի որ սովորողը առավելապես չի փոխում միջավայրը, դպրոցը. փոխվում են միայն ուսուցիչները), ապա հիմնական դպրոցից անցումը ավագ դպրոց այդքան էլ սահուն չէ: Տարիներ շարունակ սովորողների թվով ֆինանսավորումը իր բացասական ազդեցությունն է թողել նաև այդ աշխատանքների իրական բովանդակության վրա: Ավագ դպրոցներն զբաղված են առավելապես սովորողների ներգրավման աշխատանքներով, քան որակ ապահովելու նպատակով այնպիսի աշխատանք իրականացնելու, որը հեղինակություն կբերի դպրոցին՝ մրցակցության արդյունքում ապահովելով սովորողների թվի աճ: Խնդիրն ավելի է բարդանում ուսումնական հաստատությունների շենքային անբարեկարգ պայմանների պարագայում: Այս ամենը հանգեցնում է ոչ թե մրցակցության, այլ ուղղակի սովորողների թվի ապահովման, ինչը հետին պլան է մղում ուսումնադաստիարակչական գործընթացի իրական նպատակը: Ավագ դպրոցում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման բովանդակությունը թեպետ բխում է մի շարք իրավական ակտերից, այնուհանդերձ «պետական պատվեր»-ի տարրական – հիմնական – ավագ դպրոցի համար ըստ էության տրամաբանական շարունակության պահանջը և աստիճանական աշխատանքների կապը այդ օղակներում գրեթե չեն նախատեսվում:

Եթե դասվարը սովորողների մոտ կարող է ունենալ այնչափ հեղինակություն, որի շնորհիվ հեշտությամբ կլուծի շատ խնդիրներ, ապա հիմնական և ավագ դպրոցում ուսուցիչը և դասղեկը, ցավոք, չեն կարողանում լրացնել այդ բացը սովորողի մոտ: Վերը նշվածը կախված է մի քանի պայմաններից: Նախ՝ հիմնական դպրոցում արդեն ծնող-դպրոց կապը հետզհետե թուլանում է, ավագում առհասարակ կարող է և բացակայել, քանի որ սովորողներն աստիճանաբար դառնում են չափահաս (18-20 տ.), մեծանում է սովորողների շփումը տարբեր ուսուցիչների հետ, իսկ այդ ուսուցիչները ունենում են տարբեր մտահորիզոններ, օրինակ՝ հայրենիքի և հայրենասիրության վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Սովորողները հայտնվում են այնպիսի մի դաշտում (միջավայրում), ուր «ճշմարտությունը», որը բխում է ուսուցչից, հաճախ հերքվում է մեկ այլ ուսուցչի կողմից:

«Երեխաները վազել հեշտությամբ սովորում են վազելով, խոսել՝ զրուցելով, գրել՝ գրավոր վարժություններ անելով և այլն: Հենց այսպես էլ նրանք հնազանդություն կսովորեն՝ հնազանդությամբ, զսպվածություն՝

զսպվածությամբ, ճշմարտություն՝ ճիշտ ասելով, հաստատակամություն՝ հաստատակամ գործելով և այլն, միայն թե լինեն այնպիսի մարդիկ, որոնք խոսքով ու գործով օրինակ ցույց տան» [4, 337]:

Բարոյական, քաղաքացիական, հայրենասիրական, գեղագիտական դաստիարակության նորմերը չունեն միասնականության ընկալման ձև, ինչը և պետական պատվերի իրականացման խոչընդոտներից մեկն է: Եթե, օրինակ, չունենանք ընդգծված մոտեցում դաստիարակության հարցում, որ անգամ բանիմաց խառատ դառնալու պարագայում մարդը կարող է օգուտ տալ և՛ իրեն, և՛ հայրենիքին, ապա դեռ կունենանք հետևյալ պատկերը. կան պահանջվածից շատ իրավաբան, ուսուցիչ, տնտեսագետ, թարգմանիչ և այլ մասնագետներ, որոնք այսօր գործազուրկ են և չունեն անգամ իրենց մասնագիտությունը փոխելու հնարավորություն: Դպրոցներում այդ միասնական պահանջների ներդրման համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել շուկան, երկրի տնտեսությունը, տնտեսական կանխատեսումներ անել մարդկանց թվի բնական աճի դինամիկայի, ուրբանիզացիայի և այլնի վերաբերյալ: Բնական է, որ նման տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը ահռելի ռեսուրսներ և ժամանակ կպահանջեն: Այս ուղղությամբ պետական քաղաքականությունը որոշակի հաջողությունների հասավ դպրոցների տեղեկատվական համընդհանուր՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի (emis.am) ներմուծմամբ: Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման միասնական պահանջների ներդրման խնդիրը խիստ օրհասական է: Հաշվի առնելով վերը թվարկված խնդիրները՝ առաջարկում ենք հետևյալը.

1. Հանրակրթության ոլորտում ստեղծել ֆինանսավորման այնպիսի մեխանիզմ, ինչը հնարավորություն կընձեռի սովորողների բաշխվածության առաջնահերթությունը դիտել ոչ միայն սովորողների թվով, այլև ստուգաչափման միավորներով՝ առանձին գործակիցներով, օրինակ՝ արտաքին կամ ներքին գնահատման սանդղակով (որոնց տվյալները խնդրահարույց չեն լինի և կասկածի առարկա չեն դառնա), օլիմպիադաներում դպրոցի ունեցած հաջողություններով և այլն: Կարևոր է, որ դպրոցների ֆինանսավորման բանաձևում, թեկուզ և շատ չնչին գործակցով, ներմուծվի վերոշարադրյալ բաղադրիչը: Ուսման որակի նկատմամբ վերահսկողության նման պարագայում էլ ավելի կսերտանա տնօրեն-ուսուցիչ, ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ կապը, քանի որ բացառապես դպրոցների ֆինանսավորման չափից է կախված ուսումնական հաստատության բյուջեն, հետևաբար և

աշխատակիցների աշխատավարձը, դասարանների կահավորվածությունը, նյութատեխնիկական բազայի համալրումը:

2. Հնարավորինս մեծացնել դպրոց-ծնող կապը հատկապես ավագ դպրոցում: Մեր կարծիքով դրա լավագույն լուծումը սովորողների բարոյական գնահատականի և տարեկան բնութագրիչների դերի բարձրացման մեջ է: Մասնավորապես ծնողների համար որքան կարևոր է իրենց երեխաների ուսման որակը, նույնքան կարևոր պիտի դարձնել սովորողների վարքի և կարգապահության կանոնների պահպանումը, որի արդյունքում էլ կձևավորվի սովորողների բարոյական գնահատականը՝ շեշտը դնելով պարտաճանաչության և պատասխանատվության վրա: Դպրոցում սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է ներդնել ծնողների ներգրավման հստակ գործիքակազմ հատկապես այն սովորողների համար, որոնք կարգապահ չեն, սահմանել (կանոնակարգել) ծնողների (խնամակալի) պարտադիր այցելության նվազագույն շեմ:

3. Առանձին հասկացությունների (օրինակ՝ հայրենիք, հայրենասիրություն, կարգապահություն, խրախուսում և այլ) իմաստի նույնանման ընկալման համար խիստ անհրաժեշտ է դրանց բացատրությունների միանման, հնարավորինս լիարժեք մեկնաբանությունների ամփոփ պատկերը փակցնել դպրոցի միջանցքներում և դասասենյակներում: Դրա լուսաբանման համար գումարել մանկավարժական խորհրդի և մեթոդմիավորման նիստեր, ծնողական ժողովներ, կազմակերպել դասղեկական ժամեր և սեմինար քննարկումներ: Միասնական պահանջների ներդրումը և նույնանման մոտեցումը բոլորի նկատմամբ հնարավորինս կհեշտացնեն ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը, դրա ավելի արդյունավետ կազմակերպումը:

4. Սովորողների մասնագիտական կողմնորոշման հատուկ դասերի և/կամ սեմինարների ներդրումը պետք է ներառվի առաջնահերթ խնդիրների շարքում: Չնայած այն հանգամանքին, որ այդ գործընթացի իրականացումը ավելի շատ նպատակահարմար է ավագ դասարաններում, այնուհանդերձ տարրական և միջին օղակներում պակաս կարևոր չէ:

Յու. Ամիրջանյանը նշում է, որ «Ուսումնական աշխատանքը այն հիմնական բաղադրատարրն է, որը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին նախապատրաստել գործնական աշխատանքի և պատրաստակամ լինել աշխատելու իր ժողովրդի, իր հայրենիքի համար» [3, 365]:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում դեռևս առաջին էքսկուրսիաների նպատակը պետք է լինի ոչ միայն պատմական

այս կամ այն ճարտարապետական կոթողին ծանոթանալը, այլ նաև սովորողներին ծանոթացնելը տնտեսական ձեռքբերումներ ունեցող հիմնարկների գործունեությանը: Եթե, օրինակ, չիմանանք, թե ինչ է հեծանիվը, երբեք չենք մտածի հեծանիվ ձեռք բերելու մասին:

Լ. Տ. Օխիտինան գրում է. «Մարդու գիտակցության մեջ ծագած հարցերը արտահայտում են ինչ-որ բան իմանալու պահանջմունքը: Եթե պատասխանը հայտնի է, ապա իսկույն հասկացվում է, եթե հայտնի չէ, ապա սկսում է պատասխանի ակտիվ որոնման կամ հասկանալը կազմակերպելու գործընթացը» [1, 43]:

Հետևաբար, եթե մենք չգիտենք, թե այս կամ այն հիմնարկում բացի ղեկավար կազմից ուրիշ ինչ աշխատակիցներ կան, ով որքան է վաստակում, ում աշխատանքն է ավելի հետաքրքիր, հեռանկարային և այլն, որքան էլ սովորողին փորձենք ներկայացնել խառատի, հաշվապահի, բժշկի, ճարտարապետի, թարգմանչի կամ իրավաբանի մասնագիտությունները, միևնույնն է, լիարժեք պատկերացում տալ չենք կարող: Այդ իսկ պատճառով հիմնովին պիտի փոխվի էքսկուրսիաների ձևաչափը՝ լինելով իրավամբ ուսումնաճանաչողական, ոչ թե ժամանցային:

Վերը թվարկված խնդիրները, դրանց լուծման տարբերակները, անշուշտ, կատարելությամբ չեն փոխի այս ամենը, կարող են դիտվել որպես այդ աշխատանքների կազմակերպման, խնդիրների լուծման որոշակի պայման: Խնդիրն առավելապես լուծված կլինի այն ժամանակ, երբ հանրակրթական ուսումնական հաստատությունների համար մշակվի և ներդրվի «հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների համընդհանուր դաստիարակչական աշխատանքների» օրինակելի պլան, որը կներառի ոչ միայն մեր կողմից թվարկված խնդիրները և դրանց լուծումները, այլև միասնական պետական պահանջի՝ ապագա լիիրավ քաղաքացու դաստիարակման աշխատանքների կաղապարը: Միասնական պետական պահանջը պիտի բխի բացառապես ազգային շահից, ունենա հայրենասիրական դաստիարակության ընդգծված դիրքորոշում, ամրագրվի որպես իրավական նորմատիվային ակտ: Որոշակի չափանիշների, չափորոշիչների, չափիչների մշակումը և առանձին մեթոդների իրականացման ձևերի և գործիքակազմի ներդրումը շատ ավելի դյուրին կդարձնեն այդ աշխատանքների իրականացումը:

«Բարոյականությունն արտահայտվում է բարոյական պահանջների հիմնավորման և իրագործման եղանակների միջև: Այդ պահանջները հանդես են գալիս տարերայնորեն ձևավորված ու ընդհանուր ճանաչման արժանացած կանոնների ու գնահատումների տեսքով, որոնք ամրա-

պնդվել են մասսայական օրինակի, սովորույթների, հասարակական կարծիքի ուժով»,– գրում է Յու. Բաբանսկին [2, 173]:

Ուստի այդ ամենը նկատի ունենալով՝ խիստ անհրաժեշտ է, որ այդ պլանն ունենա նաև մանկավարժամեթոդական հավելվածներ: Դաստիարակության մասին հիմնարար նորմատիվային ակտի բացակայությունը խոչընդոտում է սովորողների դաստիարակվածության մակարդակի բարելավումը և պահպանումը: Սովորողների դաստիարակվածության վերաբերյալ միասնական չափանիշների, առանձին չափիչների մշակմանը և ներդրմանը զուգահեռ շատ կարևոր է իրականացնել ուսուցիչների վերապատրաստումներ՝ նպատակաուղղված դասի դաստիարակչական մասի ներդրմանը կամ բարելավմանը դասապրոցեսում:

Այսպիսով, հաշվի առնելով վերոշարադրյալը, կարող ենք փաստել, որ սովորողների մոտ կարգապահության ամրապնդման, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով մեր կողմից առաջարկված լուծումները մեծապես կնպաստեն առաջ քաշված խնդիրների լուծմանը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական օրինակելի պլանների ներդրման պարագայում ավելի տեսանելի կդառնա դաստիարակության խնդրի լուծման ճանապարհը, ինչպես նաև կհստակեցվի պետական պատվերի էությունը այդ գործընթացում:

Գրականություն

1. Ամիրջանյան Յ. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ – 2005» հրատարակչություն, 456 էջ:
2. Բաբանսկի Յ. Կ., Մանկավարժություն, 2-րդ մաս, Երևան, «Լույս» 1987, 440 էջ:
3. Հարությունյան Վ. Խ., Յան Ամոս Կոմենսկին և նրա մեծ դիդակտիկան, Երևան, «Լույս», 1970, 370 էջ:
4. Օխիտինա Լ. Տ., Դասի հոգեբանական հիմունքները, Երևան, «Լույս», 1979, 104 էջ:

О необходимости внедрения примерного плана воспитательных работ учащихся в общеобразовательных учебных заведениях

Гагик Эминян
Марине Пахлеванян

Резюме

Ключевые слова: *образование, воспитание, учебно-воспитательная работа, школа, учитель, ученик, общее образование, экскурсия, метод, профессия, стандарт, родина*

В статье отражается организация задач воспитательных работ учащихся в общеобразовательных учебных заведениях, в частности, организация воспитательных работ, особенности планирования и выполнения работ. Также выделяется и выполняется необходимость разработки и внедрения определённых стандартов и критерий в воспитательных работах учащихся. Внедрение этих стандартов в общеобразовательных учереждениях даёт возможность учителям, классным руководителям и классоводам сделать воспитательные работы более измеримыми. Придаётся значимость обеспечению связи между начальной, основной и старшей школами на более высоком уровне, а также необходимости одинакового толкования отдельных терминов и понятий, воспитательных правил и норм, организации работ учащихся в выборе профессиональной ориентации. Наряду со значимостью разработки и внедрения работ примерного воспитания, на первый план выдвинута необходимость планирования и выполнения содержаний схожих упражнений, мероприятий, семинарных обсуждений, организации экскурсий. Необходимость внедрения примерного плана всеобщих воспитательных работ учащихся в общеобразовательных учебных заведениях также обусловлена материально-техническими условиями учебных заведений и отсутствием прямых ответственных лиц за соответствующие воспитательные работы, например: в сельских общинах отсутствуют вакансии организатора воспитательных работ и заместителя директора по части профессиональных работ. В статье уделяется внимание внедрению отдельного финансируемого составляющего, которое создаст возможность здоровой конкуренции между общеобразожательными учебными заведениями.

On the Necessity of Introducing the Exemplary Plan of Learners' General Educational Work in Public Educational Institutions

Gagik Eminyan
Marine Pahlevanyan

Summary

Key words: *education, upbringing, educational work, school, teacher, learner, public education, excursion, method, profession, criterion, homeland*

The article reflects the problem of organizing learners' educational work, particularly the peculiarities of its organization, planning and implementation in public educational institutions. We have emphasized the importance of developing certain criteria and measurements in learners' educational work. The introduction of these criteria in public educational institutions will make the educational work of teachers and class teachers more measurable. The high-level connections between primary, basic and high schools are highlighted, as well as the need for the same explanation of individual terms and concepts, disciplinary rules and norms, and the organization of learners' professional orientations. Along with the importance of developing and introducing exemplary educational work, the necessity of content planning and practising drills, events, seminars, excursions have been put forward. The necessity of introducing the exemplary plan of learners' general educational work in public educational institutions is conditioned by the material technical basis and the absence of individuals with direct responsibilities for the relevant educational work (for example, in rural communities, there are no positions for an organizer of educational work and a deputy director for professional work).

We have touched upon the introduction of a separate funding component, which will give the opportunity for healthy competition between public educational institutions.

Ներկայացվել է 10.07.2021 թ.
Գրախոսվել է 17.07.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.